

**ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԻՔԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԻ ՇՈՒՐՋ
(ԺԸ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ-ԺԹ. ԴԱՐԱՍԿԻԶԲ)**

ԱՐՄԱՆ Մ. ՄԱՆՈՅԵԱՆ

armanmaloyan@mail.ru

Պատմական Հայաստանի հնագույն բնակավայրերից ու քաղաքներից էր Վասպուրական աշխարհի Նախճաան Գառուի կենտրոն Նախճաան կամ Նախիջեան քաղաքը: Միջնադարում այն բաաականին բազմամարդ ու վաճառաշահ քաղաք էր:

Նախիջեանը Հայաստանի միա քաղաքների նման բազմիցս ենթարկուել է կողոպուտի ու աներաժութիւնների՝ պարսիկների, արաբների, սելջուկ-թուրքերի արշաւանքների ու նուաճումների ժամանակաշրջանում: 1220ականներին Նախիջեանն աներուեց Խորեզմի շահ Ջալալ Ադ Դինի, մինչեւ ԺԵ. դարի սկիզբը՝ մոնղոլների, ԺԵ.-ԺԶ. դարերում, կարակոյունլու եւ ակկոյունլու քոչուոր ցեղերի հրոսակների կողմից: Այդ աներաժութիւնների ու թալանի հետեւանքով քաղաքը կորցրեց իր երբեմնի նշանակութիւնը եւ վերաժուեց մի սովորական բնակավայրի: Իրավիճակը չփոխուեց նաեւ յետագայում, երբ այն անցաւ Սեֆեան Պարսկաստանի տիրապետութեան տակ: 1604-1605ին Շահ Աբաս Ա.ի կազմակերպած բռնագաղթին ենթարկուեցին նաեւ Նախիջեանի հայերը, որոնց հիմնական մասը բնակեցուեց Պարսկաստանի Ֆահրաբադ քաղաքում: ԺԵ. դարում Նախիջեանը դարձաւ Պարսկաստանի կազմում ստեղծուած նոյնանուն խանութեան կենտրոնը եւ այդպիսին մնաց մինչեւ Թուրքմէնշայի պայմանագրի ստորագրումը (1828 Փետրուարի 10), երբ միացուեց Ռուսաստանին:

Միջազգային նշանակութիւն ունեցող տարանցիկ առեւտրի քարաւանային գլխաւոր ճանապարհներից մէկն անցնում էր Նախիջեանի վրայով, եւ նրա մերձակայ հայկական բնակավայրերը ներգրաւուած էին այդ շահաբեր առեւտրի մէջ: Այդ բնակավայրերի վաճառականները, որոնք առեւտրական կապեր ունէին տարբեր երկրների հետ, գիտէին օտար լեզուներ, ու տեղեակ էին տարբեր ժողովրդների նիստուկացին,

վարքութարքին, նշանակալից դեր էին խաղում միջազգային ապրանքափոխանակութեան մէջ: Բնական է, որ այսպիսի միջավայրում պարարտ հող էր նախապատրաստուել Եւրոպայից Արեւելք ուղարկուած քարոզիչների գործունէութեան համար, մանաւանդ որ միսիոներները չէին զլանում խոստումներ շռայլել այլախաւատ տիրապետողների լծի տակ հեծող հայ ժողովրդին՝ եւրոպական երկրների ռազմական օժանդակութեամբ ազատագրուելու հնարաւորութիւնների մասին¹:

Կաթոլիկ միսիոներների ներթափանցումն Արեւելեան Հայաստան սկսուել էր դեռեւս ԺԴ դարում եւ կապուած էր Դոմինիկեան Միաբանութեան կրօնաւորների անուան հետ: Հռոմի Յովհաննէս ԻԲ. պապի յատուկ կոնդակով 1318ին Ֆրանչիսկեան եւ Դոմինիկեան միաբանութիւնների միջեւ քարոզչական գործունէութեան շրջանների վերաբաժանում կատարուեց: Դոմինիկեաններն այդ կոնդակի թելադրանքով ստեղծեցին մի նոր արքեպիսկոպոսական թեմ, որի կենտրոնը Սուլթանիա քաղաքն էր²: Արեւելեան Հայաստանի տարածքում հաստատուած Դոմինիկեան Միաբանութեան կենտրոնը Քոնայի Սուրբ Աստուածածին վանքն էր: Միաբաններն իրենք իրենց անուանում էին Միաբանող (Ունիթոր) եղբարք³:

Միսիոներների աշխուժ գործունէութեան հետեւանքով ԺԷ դարի սկզբին Նախիջեւանում բազմապատկուեց հայ կաթոլիկ համայնքը, որն ունէր տասը գործող եկեղեցի⁴: Համայնքը իր մեծագոյն ծաւալման շրջանում հինգ զաւառ կամ թեմ ունէր եւ յիսուներկու վանք⁵: Ըստ Նախիջեւանի Գաւառի հայ կաթոլիկների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի 1601ի զեկուցագրի՝ զաւառում կար մօտ 1780 տուն կամ 19,400 հոգի հայ կաթոլիկ բնակչութիւն⁶, որ տեղաբաշխուած էր հետեւեալ բնակավայրերում. Նախիջեւան քաղաք (80 տուն), Ապարաներ (500 տուն), Ապրակունիս (100 տուն), Քոնա (70 տուն), Սալթաղ (120 տուն), Խոշկաշէն (130 տուն), Մեծշէն (50 տուն), Գանձակ (70 տուն), Շահապունիք կամ Շահապունիս (150 տուն), Ճահուկ կամ Ջահուկ (50 տուն), Ղարաղուշ (50 տուն), Մակուի շրջանի Կէծուկ եւ Արդախ (Արտազ) գիւղերում՝ համապատասխանաբար՝ 60 եւ 30 տուն:

Յետագայում, սակայն, գաւառի հայ կաթոլիկ բնակչութիւնը նուազեց. դա հետեւանք էր թուրք-պարսկական պատերազմների եւ Շահ Աբաս Ա.ի կազմակերպած բռնագաղթի: Թէեւ յետոյ Հռոմի պապի եւ եւրոպական տէրութիւնների միջամտութեան շնորհիւ Շահը թոյլատրեց հայ կաթոլիկներին վերադառնալ իրենց նախկին բնակութեան վայրերը: Սակայն իրենց թալանուած ու աներուած օջախներ վերադարձաւ հայ կաթոլիկների փոքրաթիւ մասը:

1616ին Հռոմից ուղարկուած Ա. Մարիա Չիտտադինոյի կազմած գեկուցագրի համաձայն՝ Նախիջեւանի բոլոր գիւղերում հաշուում էր մօտ 305 կաթոլիկ ընտանիք⁷:

Ըստ 1654ին հայր Դոմինիկոս Նազարեանի կազմած վիճակագրութիւն-գեկոյցի՝ կաթոլիկ հայերը տեղաբաշխուած էին այսպէս. Ապարաներ (150 տուն), Ապրակունիս (30 տուն), Քոնա (2 տուն), Սալթաղ (3 տուն), Խոշկաշէն (60 տուն), Գանձակ (1 տուն), Շահապունիս (35 տուն), Ճահուկ (100 տուն), Ղարաղուշ (4 տուն), Կէծուկ (9 տուն)⁸:


Կաթոլիկ, ինչպէս նաեւ առաքելական հայերի թուաքանակի անկմանը նպաստում էր «Իմամ Ջաֆարի» անունով յայտնի օրէնքը, որի համաձայն՝ մահմեդականութիւն ընդունած նախկին քրիստոնեան իրաւունք էր ստանում ամբողջութեամբ ժառանգելու իր քրիստոնեայ ազգակիցների ամբողջ ունեցուածքը՝ անկախ ազգակցութեան աստիճանից⁹: Նշենք, որ կաթոլիկ հայերի շրջանում անլի յաճախակի էին մահմեդականութիւն ընդունելու դէպքերը¹⁰: Թէեւ վկայութիւններ կան, որ մահմեդականացած հայերին երբեմն թոյլատրուել է վերադարձ դէպի քրիստոնէութիւն¹¹, սակայն դրանք եզակի դէպքեր էին:

Որպէս դաւանափոխութեան դրսեւորում՝ ատենի կաթոլիկացումը պետութիւն չունեցող հայութեան համար ուղղակի կորստաբեր էր եւ իր անջատողական նկրտումներով հայ ժողովրդի մի որոշակի հատուած խորթացնում, կտրում-անջրպետում էր իր եկեղեցուց ու աւանդոյթներից, մայրենի լեզուից: Դրանով իրական սպառնալիք էր ստեղծում այդ հատուածի ազգային-կրօնական դիմագիծը խեղելու եւ արագօրէն ուժացման ենթարկելու համար:

Սակայն կաթոլիկ միսիոներների եւ նրանց հայ հետետորդների գործունեությունը ունեցաւ նաեւ դրական հետեւանքներ, մասնատրապէս՝ մշակութային համագործակցութեան ձեւաւորման ու գիտամշակութային կապերի զարգացման գործում: Արեւելք ուղարկուած կաթոլիկ քարոզիչներն ու նրանց հայ հետետորդները, իրենց դիրքերը տեսականօրէն ու գաղափարապէս ամրապնդելու մտասեւեռումով, ծաւալեցին մշակութային, գիտական ու գրական աշխուժ գործունեութիւն, ստեղծեցին թարգմանական ու ինքնուրոյն արժէքաւոր ծիսական-հոգեւոր գրականութիւն, իմաստասիրական, բնագիտական ու պատմագրական երկեր¹²: Հայերին քաղաքակիրթ եւրոպայի գիտական ու մշակութային նուաճումներին հաղորդակից դարձնելուն, լատիներէնով կրթական-լուսաւորական գործը տարածելուն նպաստեց նաեւ 1632ին Նախիջեանում (Ապարաներում) հիմնադրուած կաթոլիկական դպրոցը:

ԺԷ. դարի վերջերից, չնայած Հոռմի ու եւրոպական կաթոլիկ տէրութիւնների օգնութեանը, ակներեւ էին Նախիջեանի Գաւառի հայ կաթոլիկ համայնքների թուլացումն ու անկումը: Պարսկական իշխանութիւնների պարտադրած բազմապիսի ծանր հարկերն ու տնտեսական բնոյթի հարկադրանքները, ինչպէս նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու հակազդեցութիւնը յանգեցրին հայ միարարների կրօնափոխութեանը կամ արտագաղթին: Կաթողիկոս Ղազար Ջահկեցին գրում է. *«Նմանապէս ի յերկիրն Նախջուանայ ախթարմայից (դաւանափոխների - Ա.Մ.) գիւղօրայքն բազումք դարձան ի կրօնս պարսից, որպէս Սալիթաղ, Քոնայ... եւ Կէծուկ, սոքա ամէնեքեան, իսկ Ապրակունիս, եւ Շահբունիս, եւ Խոշկաշէն եւ Ապարաներ, որ է եպիսկոպոսարան իւրեանց, սոցա մեծ մասն...»*¹³: ԺԷ. դարի վերջից սկսուել էին Նախիջեանի հայ կաթոլիկների զանգուածային արտագաղթեր դէպի Փոքր Ասիա՝ Բուրսա, Իզմիր, Կ.Պոլիս եւ այլ քաղաքներ, իսկ այնտեղից էլ՝ Եւրոպա: Այս պնդման ապացոյցներից են Կ.Պոլսից, Թիւրայից, Իզմիրից Հոռմ ուղարկուած խնդրագրերը ստորագրողների անունները¹⁴, ինչպէս նաեւ Նախիջեանցի հայ կաթոլիկների տապանաքարերի մեծ քանակութիւնը Իզմիրում եւ շրջակայքում¹⁵: Եթէ դեռ ԺԷ. դարի կէսերին աղբիւրները Նախիջեանի Գաւառում յիշատակում են

5000–7000 հայ կաթոլիկներ, ապա արդեն ժԸ. դարի սկզբին նրանց թիվը չէր անցնում միքանի տասնեակից¹⁶:



Հարկադրանքները, հետապնդումներն ու արտագաղթերը, ի վերջոյ, յանգեցրին գաառի հայ կաթոլիկ բնակչութեան թուաքանակի նուազմանը, իսկ ժԸ. դարի կէսերից նաեւ համայնքի կենսագործունէութեան դադարեցմանը: Վերջին հարուածը հասաւ թուրք-պարսկական բախումների հետեանքով: Յատկապէս աղէտալի էր 1752ին Ազատ խանի կողմից Նախիջեանի հայկական գիւղերի աւերման եւ բնակչութեան գերեւարման դրուագը:

Աւելի ուշ շրջանի հեղինակներն ու երոպացի ճանապարհորդները հետաքրքիր եւ արժէքատու տուեալներ են հաղորդում Նախիջեանի մասին: ԺԸ. դարի վերջին քառորդի ֆրանսիացի հեղինակ Լ.-Ֆ. Ֆերիէր-Սովբէֆը¹⁷ գրում է. «Նախիջեանը, որ փարեգիրները նշում են որպէս այն վայրը, ուր Նոյը հասարաբուեց ջրհեղեղից յետոյ, բաական մեծ քաղաք է,

համարեա աւերուած Նադիր շահից յեփոյ, մեփաքսի եւ բրդի մեծ առեւտրոր է այնտեղ կաւարում, քարաւանները յաճախ անցնում են այնտեղով. բնակիչները բոլորը քրիստոնէայ են, Հոռմի միսիան այնտեղ ունի կիսաւեր դոմինիկեան մենաստան. կաթոլիկների թիւը գերազանցում է հայերին, եւ ժամասացութիւնը կաւարում է ոչ թէ լաւինեղէնով, այլ ժողովրդական լեզուով [հայերէն]»¹⁸: Ըստ Ղուկաս Ինճիճեանի՝ Նախջեւանը կամ Նախջուանը պարսպապատ քաղաք էր եւ «Յառաջին ժամանակս էր սա մի ի մեծամեծ եւ ի բազմամարդ քաղաքաց. այլ այժմ անշքացեալ կայ առաջին բարեգարդութենէ իւրմէ ի պալտառոս պէտպէս առմանց եւ աւերմանց ի յաղուանից (աֆղաններից - Ա.Մ.) ի ժամանակս եւ զկնի մահուան Դահմաս գուլի խանին»¹⁹ պարսից. յորում ժամանակի անհնարին զրկանս եւ աղէփս կրեցին բնակիչքն որպէս լուաք յականափես ծերունեաց՝ որք գլխան անդէն:

Յառաջագոյն պատմեն լինել անդէն րումս իբր 30000. քայց այժմ չիք ի նմա 7000, որք ըստ մեծի մասին պարսիկք են, եւ մնացեալքն յազգէս հայոց. լի են ի նմա աւերակք պէտպէս շինուածոց եւ մզկթաց... »²⁰: Իսկ Ալիշանը Սիսականում գրում է. «Յայս սակս յոյժ սրորանկեալ է քաղաքն ի նախկին բարգաւաճանացն եւ ի բազմութենէ բնակչաց, որ արդ չեն աւելի քան 47000, երկու մասն այլազգի՝ Թաթար եւ Պարսիկ, եւ մի՝ Հայ»²¹: 1807-1809՝ Արեւելքում ճանապարհորդած Տրապիզոնի ֆրանսիական հիւպատոս Ա. Դիպրէն, նշելով քաղաքի կիսաւեր վիճակի մասին, գրում է, որ բնակիչների թւում հաշւում են յիսուն ընտանիք հայ հերձուածող²²: 1814ին Նախիջեւանում գտնուող ուղեգիր Ջէյմս Մորիլըրը գրում է, որ քաղաքն ունի մօտաւորապէս 2000 բնակիչ, սակայն քաղաքը երկար ժամանակից իվեր քայքայուած է եւ շարունակում է քայքայուել²³: 1812ին Նախիջեւանով անցած ուղեգիր Ֆրէյզանը գրում է. «Նախիջեւանը մի մեծ վայր է, որ յաճախ ենթակայ է եղել աւերումների: Պարսիկ պատմաբանները հաստատում են, թէ նախապէս այնտեղ կար քաղաք հազար րում... Նախիջեւանը շարքիչ քան ունի իր նախկին փառքից»²⁴: Նոյն թուականին քաղաքում եղած անգլիացի ուղեգիր Ուիլիըմ Աուզլըր ես վկայում է, որ նախկինում ընդարձակ այս քաղաքը «բաղկացած է

աւերակներից, որոնց մէջ կան հիւանալի տների մնացորդներ»²⁵: Միքանի տարի անց (1817) քաղաք այցելած ուղեգիր Մորից Կոցեբին նշում է, որ քաղաքն ու շրջակայքն այնքան ամայի են, որ հնարաւոր չէ նկարագրել, ապա յաւելում. «Իր նախկին բարգաւաճ օրերում, ասում են, թէ երեսուն հազար տուն ունէր, բայց այժմ հազիւ թէ այս թուի մէկ-երրորդը մնում է»²⁶: Նոյն թուականին քաղաք այցելած ուղեգիր Զ. Զոնսոնը գրում է. «Նախիջեւանում տեսնում են շատ ընդարձակ մի քաղաքի մնացորդները, նկարելի՝ ամրութիւնների, քարանսարանների եւ մինարէթների աւերակները: ...Թում է, թէ ներկայ քաղաքը կանգնած է հնի վրայ, որ պարզ երեւում է շէնքերի մէջ նկարելի փոսերից, կամարներից եւ պատերի բեկորներից»²⁷: Իսկ 1817–1820ին ճանապարհորդած Ռոբերտ Քէր Փորտըրը քաղաքի մասին գրում է. «Նախապէս դա բաւական մեծ քաղաք էր, բայց պատերազմի աւերները փոքրացրել են ամէն տեսակէտից... Նրա ներկայ նուազած շրջագծի շուրջը գտնւում են մեծ տարածութեամբ աշտարակների, մզկիթների, տների եւ այլ աւերակները, որոնք երբեմն նրա պարիսպներից ներս էին [գտնւում]: Նոյնիսկ երբ քաղաքին մօտեցանք, անցնում էինք բոլորովին կործանուած անքնակ տեղերից, մինչեւ ներկայ մուտքին հասնելը: ...դա (Նախիջեւանը - Ա.Մ.) շատ յաճախ գոհուել է պայքարող բանակների»²⁸:

Այսրկովկասի միքանի խոշոր քաղաքներում հայ բնակչութեան թուաքանակի վերաբերեալ ուշագրաւ տուեալներ է հաղորդում Պիոտր Բուտկովը: Նա, խօսելով 1780ականներին Գրիգորի Պոտիոմկինի՝ Ասիայում քրիստոնէական պետութիւն ստեղծելու նախագծի մասին, գրում է, որ այդ ժամանակաշրջանին վերաբերող տեղեկութիւնների համաձայն՝ Նախիջեւանում կար 500 տուն հայ բնակչութիւն²⁹: Այսրկովկասի խոշոր քաղաքներից Շամախին եւ Բաքուն, որոնք աւելի բարենպաստ պայմաններում էին եւ աւելի քիչ էին ենթարկւում յարձակումների, ըստ Ու. Լեւիատովի, ունէին՝ Շամախին՝ 10,000 (ԺԸ. դարի վերջին) եւ Բաքուն՝ մօտ 5000 (1810ին) բնակչութիւն: Հետեաւաբար, Նախիջեւանի ամբողջ բնակչութեան թիւը մօտ 5000 էր: Մէկ այլ վիճակագրական տեղեկութեան համաձայն՝

ԺԹ. դարասկզբին Նախիջեանում կար ընդամենը 700 տուն բնակչութիւն³⁰:

Համադրելով բերուած հաղորդումները՝ գտնում ենք, որ բոլոր հեղինակները համակարծիք են, թէ Նախիջեանը նախկինում աւելի մեծ, բարգաւաճ ու բազմամարդ քաղաք էր, քան յետագայում՝ ԺԸ. դարավերջին եւ ԺԹ. դարասկզբին: Իսկ ինչ վերաբերում է Նախիջեան քաղաքի բնակչութեան թուաքանակի մասին նշուած հակասական ու իրարամերժ տուեալներին, ապա գտնում ենք, որ Ինճիճեանի հաղորդած 7000ը պէտք է հասկանալ ոչ թէ տուն, այլ՝ շունչ: Հայ բնակչութեան թուաքանակի մասին տուեալներում իրականութեանն աւելի մօտ է թւում Ալիշանի հաղորդածը. այսինքն՝ թէեւ քաղաքի ամբողջ բնակչութեան մէկ-երրորդն են կազմել հայերը, սակայն, առանձին վերցրած, հայերի թիւը գերազանցել է ե՛ւ թաթարների, ե՛ւ պարսիկների թւին: Միաժամանակ հաւանական ենք համարում, որ Դիպրէի հաղորդած «յիսուն տուն» բնակչութիւնը ոչ թէ առաքելական հայերի թուաքանակն է, այլ կաթոլիկ հայերի: Նախիջեանի բնակչութեան թուաքանակի վերաբերեալ տուեալներում չափազանցութիւն է Կոցեբիւի հաղորդածը (մօտ 10000 տուն) եւ ակնյայտօրէն քիչ՝ Մորիէրի հաղորդածը (2000 բնակիչ): Աւելի արժանահաւատ է թւում Բուսկովի տեղեկութիւնը, որի համաձայն՝ 1780ականներին Նախիջեանի հայ բնակչութեան թիւը մօտ 3000 էր, եւ քանի որ այդ ժամանակաշրջանին վերաբերող տուեալներով Նախիջեան քաղաքում կաթոլիկ հայերի թիւը միջանի տասնեակից չէր անցնում, հետեւաբար այդ 3000 հայերի ճնշող մեծամասնութիւնը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ էին: Այսպիսով՝ Ֆերիէր-Սովբէֆի այն տեղեկութիւնը, թէ Նախիջեանում «...բնակիչները բոլորը քրիստոնեայ են... կաթոլիկների թիւը գերազանցում է հայերին», իրականութեանը չէր համապատասխանում:

Նախիջեանի հայերը դարեր առաջ աշխուժ առեւտրական կապեր ունէին Ռուսաստանի եւ Եւրոպայի քաղաքների վաճառականների հետ եւ Եւրոպայի ու Ասիայի միջեւ տարանցիկ առեւտրում կարեւոր մասնակցութիւն ունէին: Պարսկական տիրապետութեան տարիներին Նախիջեանը տարանցիկ

առեւտրում ունեցած իր կարեւոր դերը որոշ չափով պահպանում էր, թէւ տարանջիկ քարաւանային առեւտուրը Արեւմուտքի հետ կորցրել էր իր նախկին նշանակութիւնը: Արեւելեան Հայաստանը Ռուսաստանի կազմի մէջ մտնելուց առաջ (1827ին) Նախիջեան քաղաքի բնակչութեան թիւը 4360 էր, իսկ 1831ին քաղաքի բնակչութեան թիւը հասաւ 5470ի³¹: Ռուս-պարսկական (1826-1828) պատերազմից յետոյ կազմակերպուած պարսկահայերի վերաբնակեցման արդիւնքում Նախիջեան քաղաքում բնակութիւն հաստատեց 265 հայ ընտանիք (1110 բնակիչ)³²: Պարսկահայերի վերաբնակեցման շնորհիւ քաղաքը սկսեց տնտեսապէս բարգաւաճել, աշխուժացաւ արհեստագործութիւնն ու առեւտուրը: Քաղաքի բնակչութեան մեծ մասը ներգրաւուած էր արհեստագործութեան եւ գիւղատնտեսութեան մէջ: Արտահանում էին բազմատեսակ արհեստագործական ապրանքներ եւ գիւղմթերքներ, յատկապէս՝ բամբակ, խաղող, գարի, կտաւատ եւ կտաւատի ձէթ³³: Քաղաքը յայտնի էր նաեւ իր գորգերով եւ գեղեցիկ մետաքսեայ ջեջիմներով³⁴:

Ինչ վերաբերում է Ֆերիէր-Սովբէֆի տեղեկութեան, թէ Նախիջեանում «*ժամասացութիւնը կարարում է ոչ թէ լարիներէնով, այլ ժողովրդական լեզուով [հայերէն]*», ապա նշենք, որ Մ. Ուղեւորիւնը, խօսելով դոմինիկեանների՝ լատինաձէս ժամասացութիւնը տարածելու եռանդի մասին, գրում է, որ նրանք այն «*մինչեւ ԺԸ դարուն կէսերը պահեցին*»³⁵: Այս խնդրի վերաբերեալ արժէքատու վկայութիւններ կան Ալիշանի մօտ. նա յիշատակում է Յ. Բարբարոյի այցելութիւնը Ջահուկ (1477ին) եւ մէջբերում նրա խօսքերը Երնջակի դոմինիկեանների մասին. «*...պարարագեն ըստ մերս ծիսի, այլ իրեանց լեզուա...*»³⁶: Այնուհետեւ Ալիշանը մէջբերում է Նախիջեանի միարարներին այցելած վենետիկցի անանուն վաճառականի հետեւեալ խօսքերը. «*...զպաշարօն կարարեն ի հայ լեզու, զի մոռացեալ են զիտալականն...*»³⁷: Այս վկայութիւնները հաստատում են Ֆերիէր-Սովբէֆի տեղեկութեան ճշմարտացիութիւնը. այսինքն, Նախիջեանի դոմինիկեանները ժամասացութիւնը թէւ կատարում էին լատինական ձէսով, սակայն ժամասացութեան լեզուն հայերէնն էր: Դրա պատճառը, սակայն, վանականների՝ իտալերէնը մոռացած լինելը չէր, այլ դա աւելի հեռահար

նպատակ էր հետապնդում. այն է՝ ժամասացութիւնը տեղաբնիկների մայրենի լեզուով կատարելու միջոցով բազմապատկել իրենց դասնակիցների թուաքանակը:

Սակայն 1800ականներից սկսած՝ Նախիջեանի բնակչության ժողովրդագրական պատկերը սկսեց փոխուել: Մահմեդական տարրը (թաթարներ, նաեւ պարսիկներ, քրդեր) աճի անելի բարձր ցուցանիշներ արձանագրեց: ԺԹ. դ. վերջերին Նախիջեանում մահմեդականները կազմում էին ամբողջ բնակչության մինչեւ 40-50%ը: Հակառակ դրան՝ 1900-1926ին շեշտակիօրէն սկսեց կրճատուել ու նուազել հայ բնակչության թիւը: Եթէ նախկինում հայերը կազմում էին ընդհանուր բնակչության թւի 40-50%ը, ապա 1960ականներին, Խորհրդային Ադրբեջանի վարած հայափախած քաղաքականութեան արդիւնքում, հայերի թուաքանակը զգալիօրէն կրճատուեց՝ կազմելով ամբողջ բնակչութեան մօտ 10-12%ը: Յետագայում եւս շարունակուեց Նախիջեանի հայաթափումը, եւ օրէցօր նուազող նախիջեանահայութիւնը (Նախիջեանի ԻՀ բնակչութեան մօտ 2%ը) վերջնականապէս տեղահան արուեց եւ բռնազաղթեցուեց 1989ին³⁸: Այդպիսով, Հայաստանի այս բնաշխարհին առժամանակ զրկուեց բնիկներից:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Յովհաննէս Քոնեցի, *Յաղագս Քերականին*, քնագիրը հրատարակութեան պատրաստեց Լ. Ս. Խաչիկեանը, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1977, էջ 28:

² Նոյն, էջ 21-221 Սուլթանիա կամ Սուլթանիէ քաղաքը գտնւում էր Ատրպատականում, Իրան:

³ Հայր Սահակ Կոզեան, «Հայոց եկեղեցին» Մինչեւ Փլորենտեան ժողովը, Պէրիոփ, [ա.տ.] 2 1961, էջ 482:

⁴ Ա. Վ. Բայրուրդեան, «XVII դարում Արեւելեան Հայաստանում Կաթոլիկ Միսիոներների Գործունէութեան Պատմութիւնից», *Պարմաբանասիրական Հանդէս*, N 2, 1989, էջ 148:

⁵ Մ. Ուղեւորիյն, «Համառօտ Ակնարկ Մը Քարոզող եւ Միաբանող Եղբարց Պատմութեան Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, N 1, 1922, էջ 21:

⁶ Ալիշան, *Միսական*, Վենետիկ, Տպ. Ս. Ղազար, 1893, էջ 387. նաեւ՝ Հ. Սահակ Ճեմնեմեան, *Նախիջեանի Հայոց Վարժարանը եւ Հոռմը*, Վենետիկ, Տպ. Ս. Ղազար, 2000, էջ 7. նաեւ՝ Տ. Հ. Յակոբեան, «Հայերի Պայքարը Կաթոլիկական Միսիանների Ասիմիլատորական Զգտումների Դէմ Իրանում

(XVII-XVIII դդ.)», *Արեւելագիտական ժողովածու, Հտր. I*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1960, էջ 267:

⁷ Ճեմճեմեան, էջ 8:

⁸ Ալիշան, *Միսական*, էջ 387:

⁹ Այս օրէնքի մասին անելի մանրամասն տե՛ս՝ Մ. Կարապետեան, ««Իմամ Զաֆարի» Օրէնքը եւ Արեւելահայերը (XVII-XVIII Դարեր)», *Պարմարանասիրական Հանդէս*, N 1, 1988, էջ 219-221:

¹⁰ 1657 Յուլիսի 28ին Նախիջեանի արքեպիսկոպոս Պօղոս Փիրումալլին հաղորդում է, որ, համաձայն «Իմամ Զաֆարի» օրէնքի, Քոնա եւ Սալթաղ գիւղերից 130 ընտանիք, իրենց ունեցուածքից չգրկուելու համար, դարձան մահմեդական, Ապարաներից 60 ընտանիք եւս «թուրք» դարձաւ: 1674 Մարտի 24ին Մատթէոս Աւանիսեց արքեպիսկոպոսը տեղեկացնում է, որ Գանձակ գիւղում բոլորը մահմեդական են, միայն 10 կաթոլիկներ են մնացել, Կէժուկում՝ 8 տուն, իսկ Ղարաղուշում 5 տուն: Եթէ մէկ-երկու տարի էլ անցնի՝ ոչ մի քրիստոնեայ չի մնայ (Ճեմճեմեան, էջ 15-16):

¹¹ 1649 Նոյեմբերի 20ին Դոմինիկոս Նազարեանը Ապարաներից գրած նամակում հաղորդում է, որ Օգոստինոս Բաջենց արքեպիսկոպոսի ջանքերով 30 հոգի, որ առաջ մահմեդական էին, նորից դարձան կաթոլիկ, քանի որ արքեպիսկոպոսի հետ «ահագին ծախսով» գնացին շափ մօտ եւ յաջողեցին (Ճեմճեմեան, էջ 18):

¹² Արեւելեան Հայաստանում կաթոլիկների մշակութային գործունեութեան եւ նրանց թողած գիտամշակութային հարուստ ժառանգութեան մասին տե՛ս՝ Լ. Խաչիկեան, «Արտագի Հայկական Իշխանութիւնը եւ Մործորի Դպրոցը», *Բանբեր Մարենադարանի*, N 11, 1973, էջ 168-209. Նաեւ՝ Քոնսեցի, էջ 3-52. Նաեւ՝ Ճեմճեմեան, էջ 7:

¹³ Ղազար Զահկեցի, *Գիրք Ասորւածաքանական, Որ Կոչի Դրախտ Յանկայի, Կ.Պոլիս, ՌՃՁԴ (1735)*, էջ 334: Մեջբերումն ըստ՝ Բայբուրդեան, էջ 151, հմմտ. Պ. Յակոբեան, *Հայ Կաթոլիկութիւնը Պարմա-Քննական Լոյսի Տակ, - Հրատէր Ողջամտութեան*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1993, էջ 105:

¹⁴ Ճեմճեմեան, էջ 19-20:

¹⁵ Հ. Յ. Վ. Քօսեան, *Հայր Ի Ջմիտնիա եւ Ի Շրջակայս, Հտր. Ա.*, Վիեննա, Մխիթարեան Տպ., 1899, էջ 301-320. Նաեւ՝ Ա. Ա. Խառատեան, «Հայ Գաղթականութիւնը Էգէեանի Մերձափնեայ Շրջանում (XIV-XVIII դդ.)», *Պարմարանասիրական Հանդէս*, N 4, 1988, էջ 40, 43. Նաեւ՝ Ճեմճեմեան, էջ 20:

¹⁶ Ճեմճեմեան, էջ 9:

¹⁷ Ֆրանսիացի քաղաքական գործիչ եւ դիւանագետ Լուի-Ֆրանսուա Ֆերիէր-Սովբէֆը ԺԵ. դարի վերջին քառորդի հեղինակ է. Նրա ճանապարհորդութեան շարժառիթը դեպքանագնացական էր: Նա ծնուել է 1750ին Շամպայնի Մուլէն դ'Արնակ քնակավայրում: 1782-1789ին Լուի ԺԶ.ի կառավարութեան կողմից դիւանագիտական առաքելութեամբ ուղարկում է Կ.Պոլիս եւ այստեղից երկու անգամ (1784-1785 եւ 1787) մեկնում է Իրան՝ Սպահան: 1788 Սեպտեմբերի

18ին ֆերիեր-Սովբեֆը մեկնում է Կ.Պոլսից դեպի Ֆրանսիա եւ Հոկտեմբերի 15ին ափ իջնում Տուլոնում: Վերադառնալով Փարիզ՝ նա Արեւելքում ճանապարհորդական իր յիշողութիւնները հրատարակում է 1790ին Մասսորիիստում (2 հատոր), ապա նաեւ Փարիզում (1790, 2 հատոր): Ֆերիեր-Սովբեֆի ուղեգրութիւնը երրորդ անգամ հրատարակում է Փարիզում, 1807ին *Voyages Faits en Turquie, en Perse et en Arabie* վերնագրով, 2 հատորով: Այն հրատարակուել է նաեւ գերմաներէն: Ուղեգրութեան ԻԱ. ԻԴ. գլովները նուիրում են Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Շիրվանի, Ատրպատականի եւ Թարիզի նկարագրութեանը: Հեղինակը տեղեկութիւններ է հաղորդում տարբեր քնակավայրերի, այցելած երկրների քաղաքական, տնտեսական դրութեան, քնական հարստութիւնների, արտադրողական ուժերի, քնակչութեան էթնիկական կազմի, սովորոյթների ու հաւատալիքների, պատմական ու ռազմական անցողաբանութեան մասին (*La Grande Encyclopédie Inventaire Raisonné des Sciences, des Lettres et des Arts, t. 17*, էջ 326. նաեւ՝ *Biographie Universelle Ancienne et Moderne, Nouvelle Edition, Tome Septième, Bruxelles, 1843-1847*, էջ 367. նաեւ՝ *Larousse du XX^e Siècle en Six Volumes, Publié sous la Direction de Paul Augé, Tome Troisième, Paris, 1930*, էջ 458 (այստեղ նրա ծննդեան թուական է նշում 1762ը). նաեւ՝ Մ. Ա. Polyevtkov, *Yevropeiskie Puteshestvenniki XIII-XVIII VV. Po Kavkazu (XIII-XVIII Դարերի եւրոպացի ճանապարհորդները Կովկասում)*, Թիֆլիս, 1935, էջ 106. նաեւ՝ Մ. Կ. Զուլալեան, *Հայ ժողովրդի XIII-XVIII Դարերի Պատմութեան Հարցեր*, էջ 62:

¹⁸ L.-F. Ferrières-Sauveboeuf, *Mémoires, t. 1*, Maastricht, 1790, էջ 215:

¹⁹ Խօքը Պարսկաստանի պատմութեան ամենաինքնատիպ ու ակնաւոր պետական գործիչներից մէկի՝ Նադիր շահի (1736-1747) մասին է: Նա եղել էր հասարակ զինուոր. իր աշխատասիրութեան ու տաղանդի, յամառ կամքի ու խիզախութեան շնորհիւ քարծրանալով ծառայողական աստիճաններով՝ դարձել էր զօրավար: Երիտասարդ տարիներից մասնակցել է Պարսկաստանում իրենց տիրապետութիւնը հաստատած աֆղանների դէմ մղումը՝ ազատագրական պատերազմներին, ապա ծառայութեան անցել Թահմազ Բ. շահի մօտ, նշանակուել քանակի գլխաւոր հրամանատար: 1736ին Նադիրը գահընկեց է անում Աբաս Գ.ին եւ իրեն հռչակում Պարսկաստանի շահ: Նա յատուկ քաղաքականութիւն է մշակում հայոց եկեղեցու նկատմամբ, անձամբ այցելում էքմիաձին, լինում Մայր Աթոռում, հանդիպում Ամենայն Հայոց Կաթողիկոս Աբրահամ Գ. Կրետացու հետ: Նա արտօնութիւններ է շնորհել հայոց եկեղեցուն եւ ազատել հարկերից: 1735ի հրովարտակով հաստատել է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան իրատւնները: Չափազանց կարեւոր էր, որ հայ հոգեւորականութեան խնդրանքով Նադիրը սահմանափակում է կաթօլիկ առաքելութիւնների գործունէութիւնը Պարսկաստանում, արգելում նրանց քարոզչական առաքելութիւնը պարսկահայերի շրջանում, մի բան, որ առաջացրել էր Ֆրանսիայի դժգոհութիւնը: Նադիրը Երեւանի նոր խանին խստագոյնս

յանձնարարում է հոգատար լինել հայոց կաթողիկոսի և ընդհանրապես հայերի նկատմամբ, խորհուրդ է տալիս չվստահել Երեանի պարսիկ և թուրք աղաներին, այլ ամեն հարցում խորհրդակցել «կաթողիկոսի և հայ մելիքների հետ», քանի որ «Երկիրն ու ժողովուրդը նրանցն են, և նրանք պէտք է այն շէնացնեն»

(http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_Nadir_shahy_ev_hayery):

²⁰ Ղուկաս Ինճիճեան, *Աշխարհագրութիւն Չորից Մասանց Աշխարհի, Ասիոյ, Եւրոպիոյ. Ափրիկոյ. և Ամէրիկոյ, Մասն Առաջին, Ասիա, Հարոր Ա., Ս. Ղազար, Վենետիկ, 1806*, էջ 266:

²¹ Ալիշան, *Սիսական*, էջ 503:

²² A. Dupré, *Voyage en Perse, Fait Dans les Années 1807, 1808 et 1809. T. 2*, Փարիզ, 1819, էջ 251:

²³ Յովհաննէս Յակոբեան, *Ուղեգրութիւններ. Աղբիւրներ Հայաստանի և Անդրկովկասի Պարմութեան, Ուղեգրութիւններ, ԺԺ. Դարի Առաջին Քսանամեակ (1800-1820)*, Հրտ. Մելգոնեան Ֆոնդի, Երեան, 1934, Հտր. Զ., էջ 311:

²⁴ Նոյն, էջ 419:

²⁵ Նոյն, էջ 449:

²⁶ Նոյն, էջ 551:

²⁷ Նոյն, էջ 636:

²⁸ Նոյն, էջ 776-777:

²⁹ P. G. Butkov, *Materiali Dlya Novoy Istorii Kavkaza S 1722 Po 1803 God* (Նիսիւթեր Կովկասի նոր պատմութեան համար 1722ից մինչև 1803), *Chast Vtoraya* (մասն երկրորդ), էջ 143:

³⁰ V.G., *Statisticheskoye Opisanie Nakhichevanskoy Provintsii* (Նախիջեանի գաւառի վիճակագրական նկարագրութիւն), Սանկտ Պետերբուրգ, 1833, էջ 68. նաեւ՝ F. M. Aliev, *Goroda i Gorodskaya Torgovlia V Azerbaydjane Vo Vtoroy Polovinie XVIII V.* (Քաղաքները և քաղաքային առևտուրը Ադրբեջանում XVIII դարի երկրորդ կեսին), Ադրբեջանի ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Հտր. 13, Բաքու, 1958, էջ 143:

³¹ I. Shopen, *Istoricheskiy Pamiatnik Armianskoy Oblasti* (Հայկական Մարզի պատմական յուշարձան), Սանկտ Պետերբուրգ, 1852, էջ 643-644. նաեւ՝ Խ. Յ. Աղալբեգեան, *Հողային Հարցը Արեւելեան Հայաստանում (1801-1917 թթ.)*, Երեան, 1959, էջ 14. նաեւ՝ Վ. Ե. Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը և Նրա Զբաղրածութիւնը (1828-1978)*, Երեան, 1979, էջ 164. նոյնի *Հայաստանի Բնակչութեան Վերարտադրութիւնը և Տեղաշարժերը XIX-XX Դարերում, XXI Դարի Շէմին*, Երեան, 2002, էջ 60:

³² Shopen, էջ 635. նաեւ՝ Ա. Երիցեանց, *Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX Դարում, Մասն Ա.*, Թիֆլիս, Շարածէ, էջ 337. նաեւ՝ Ե. Լալայեան, *Նախճատան կամ Նախիջեանի Ոսպիկանական Շրջան, Թիֆլիս*

(ա.թ.), էջ 29. Նաե՛լ Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը եւ, էջ 26, նոյնի՝ Հայաստանի Բնակչութեան Վերարտադրութիւնը*, էջ 30:

³³ Յակոբեան, էջ 778:

³⁴ Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը եւ*, էջ 177, 178:

³⁵ Ուդենրիյն, «Համառօտ Ակնարկ Մը Քարոզող եւ Միաբանող Եղբարց Պատմութեան Հայաստանի Մէջ», *Բազմավէպ*, N 2, 1923, էջ 37:

³⁶ Ալիշան, *Միսական*, էջ 391:

³⁷ Նոյն, էջ 391:

³⁸ Վ. Ե. Խոջաբեկեան, *Հայաստանի Բնակչութիւնը եւ*, էջ 164. նոյնի՝ *Հայաստանի Բնակչութեան*, էջ 60:

CERTAIN DEMOGRAPHIC FACTS RELATED TO
NAKHICHEVAN'S HISTORY (late 18th-early 19th C.)
(Summary)

ARMAN MALOYAN
armanmaloyan@mail.ru

The article dwells on certain historical demographic facts related to Nakhichevan in the late-18th and early-19th centuries. It elaborates on the rise and fall of the city of Nakhichevan as a prosperous trade and transit hub in the region.

The author notes that this prosperity was partly related to the active presence of the Franciscan and Dominican fathers, whose missionaries had penetrated Eastern Armenia as early as the 14th century. These missionaries had converted large numbers of Orthodox Armenians to Catholicism. However, the local Armenian Catholics maintained the Armenian language in the liturgy conducted in their churches.

Due to the presence of Catholic missionaries, a number of Western European travellers came to the area, wrote about it and described life in Nakhichevan.

The author compares and contrasts the conflicting figures given by these travellers regarding the Catholic population of the city and notes that notwithstanding the ebb and flow of the Christian population of the area due to Ottoman versus Persian as well as Russian versus Persian wars, Armenians constituted the majority in Nakhichevan till the late-19th century.

The author notes that during the first quarter of the twentieth century the number of the Armenians dwindled significantly. It dropped to a tiny 10-12% in the 1960s due to anti-Armenian policies adopted by the Soviet Azerbaijani authorities. In 1989 the Nakhichevan Armenians constituted not more than 2% of the population of the Autonomous Republic of Nakhichevan.